ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊՍ. ՊՈՋԱՊԱԼՅԱՆԻ ՋԵԿՈՒՅՑԸ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՂԲԱՅՐՆԵՐ,
ԳԵՐԱՇՆՈՐՀ, ՅՈԳԵՇՆՈՐՀ, ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՀԱՅՐԵՐ,
ՀԱՐԳԵԼԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ,

1999 թ. հունիսի 29-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվանը վերատին ագո քող իջավ Ս. Գրիգոր Լուսավորչի գահին:

Մի քանի օր անց, հուլիսի 4-ին, ժամը 20.00-ին, գումարվեց Գերագույն Յոգևոր Խորհրդի և եպիսկոպոսաց համատեղ ժողով՝ ատենապետությամբ Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի և Կ. Պոլսո հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի:

Աստծու կամքով տեղի ունեցավ Կաթողիկոսական Տեղապահի ընտրություն: Փակ գաղտնի քվեարկությունից հետո Մենք ստանձնեցինք Տեղապահի դժվարին ու պատասխանատու պաշտոնը՝ Մեր գլխավոր պարտականությունը համարելով, Գերագույն Յոգևոր Խորհրդի հետ համատեղ, Ազգային-Եկեղեցական Ժողովի գումարումը, որի նպատակն Ամենայն Հայոց Հայրապետության հերթական գահակալի ընտրությունն էր:

Միաժամանակ ջանացել ենք հետևել և հսկել Մայր Աթոռում հիմնված Ազգային-Եկեղեցական Ժողովի հանձնախմբի, կազմակերպչական մյուս բաժանմունքների գործունեությունը, ներքին և արտաքին հարաբերությունները՝ կատարելով նաև անձնական ու անհրաժեշտ կարգադրություններ:

Տեղապահական գործերին զուգահեռ, որպես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ, պարտավոր էինք կատարել նաև դիվանապետի պարտականությունները:

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1999 թ. հունիսի 4-ից մինչև հոկտեմբերի 20-ը գումարվեցին Գերագույն Հոգևոր Խորհրդի 5 նիստեր, որոնցից մեկը՝ եպիսկոպոսաց ժողովի հետ համատեղ, հաջորդը՝ հետեպիսկոպոսաց ժողովի, և երեք եպիսկոպոսաց ժողով:

Հուլիսի 4-ի համատեղ ժողովում, Կաթողիկոսական Տեղապահի ընտրությունից հետո, ընդունվեց ժողովի օրակարգը, ուր առաջնային հարցեր էին Կաթողիկոսի ընտրության թվականի, ինչպես նաև Ազգային-Եկեղեցական լիագումար ժողովի պատգամավորների թվաքանակի ճշտումը:

Կաթողիկոսի ընտրության հարցում որոշվեց շտապել, որպեսզի, մինչ 2000 թվականը, Հայաստանյայց Եկեղեցին ունենա իր Վեհապետը: Հարցը քննարկվեց համատեղ ժողովից անմիջապես հետո գումարված Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողովում:

Հուլիսի 9-ի Գերագույն Հոգևոր Խորհրդի ընդլայնված ժողովում առաջադրվեց և կազմվեց Կաթողիկոսի ընտրության կարգադրիչ հանձնախումբ, որի պատասխանատու նշանակվեց Գերաշնորհ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, իսկ օգնականներ՝ Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը և Գերաշնորհ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը: Այդ նպատակով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հաստատվեց նաև համապատասխան գրասենյակ: Ճշտվեց Ազգային-Եկեղեցական Ժողովի թվականը, լսվեցին նաև այլ հարցեր:

Ազգային-Եկեղեցական Ժողովի կազմակերպման Էջմիածնի գրասենյակ

Ազգային-Եկեղեցական Ժողովի կազմակերպման Էջմիածնի գրասենյակի առջև դրված խնդիրն էր՝ զբաղվել Հայաստանի, Արցախի և ԱՊՀ երկրների թեմերի հետ առնչվող հարցերով:

Կազմակերպչական աշխատանքներն ընթացան մի քանի փուլով:

Առաջին փուլի աշխատանքների շրջագծի մեջ էր մտնում վերոնշյալ թեմերին առաքված հարցարանների տվյալների հիման վրա յուրաքանչյուր թեմից առաջադրվող պատգամավորների թվի ճշտումը:

Օգոստոսի 26-ին տեղի ունեցած Գերագույն Հոգևոր Խորհրդի և Ազգային-Եկեղեցական Ժողովի կազմակերպման հանձնախմբի համատեղ նիստում, թեմական հարցաթերթիկների տվյալների քննարկումից հետո, ճշտվեցին թեմերի և մյուս կառույցների, այսինքն՝ հայրապետական պատվիրակության և հոգևոր հովվությունների պատգամավորների թվաքանակը, որով և ավարտվեց կազմակերպչական աշխատանքների անդրանիկ փուլը:

Համաձայն երկրորդ փուլում ծրագրված աշխատանքների, բոլոր թեմերին և կառույցներին պաշտոնապես հայտնվեց իրենց պատգամավորների թվաքանակի իրավունքը, այսինքն՝ թե յուրաքանչյուր թեմ որքան պատգամավոր

պետք է ունենա, և հրահանգվեց մինչև հոկտեմբերի 5-ը կազմակերպել տեղական ընտրական ժողովներ, հանձնախմբին հանձնել ընտրված պատգամավորների և անձնափոխանորդների ցանկերը, ինչպես նաև՝ նրանց հարցաթերթիկները:

Հանձնախումբը զբաղվում է նաև Ազգային-Եկեղեցական Ժողովի կազմակերպչական-տեխնիկական հարցերով, ինչպես, օրինակ, պատգամավորների դիմավորում, տեղավորում և այլն:

Հանձնախմբի աշխատանքները լավագույնս կազմակերպելու նպատակով օգոստոս-հոկտեմբեր ամիսներին Մայր Աթոռ տեղափոխվեց Գերաշնորհ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը՝ իր վրա վերցնելով Էջմիածնի գրասենյակի բոլոր աշխատանքների կազմակերպումն ու պատասխանատվությունը:

Առավել արդյունաշատ և արագ գործելու նպատակով, Էջմիածնի գրասենյակը մշտապես կապի մեջ եղավ Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան թեմի Առաջնորդարանում գործող գրասենյակի հետ՝ միաժամանակ ապահովելով երկուստեք համագործակցությունը:

Այժմ ևս գրասենյակի աշխատանքները բնականոն ընթացքի մեջ են և նույն կերպ կշարունակվեն մինչև Ազգային-Եկեղեցական Ժողովի վերջը: Ուստի Մեր շնորհակալությունն ենք հայտնում գրասենյակի բոլոր աշխատողներին և առանձնապես Նաթան և Եզնիկ Սրբազաններին՝ իրենց վրա դրված պարտականությունները լավագույնս և բարեհաջող կատարելու համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՆԵՐԿԱ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Հուլիսի 9-ին, եպիսկոպոսաց ժողովից անմիջապես հետո գումարված Գերագույն Հոգևոր Խորհրդի ընդլայնված նիստում Մեր կողմից հայտարարվեց Վեհափառ Հայրապետի աշխատասենյակում կատարված հաշվառման արդյունքների մասին, որին ներկա էին Տ. Արտակ աբեղա Տիգրանյանը, պրն. Ներսես Կարամանուկյանը, պրն. Հարություն Մելյանը՝ Մեր գլխավորությամբ:

Կատարվեց հանձնում և ընդունում: Կան գաղտնապահարաններ, որոնք կնքված են դեռևս Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի օրոք, չեն բացվել նաև Գարեգին Ա Կաթողիկոսի օրոք, բնականաբար, չբացվեցին նաև մեր կողմից: Գարեգին Սրբազանի առաջարկով գաղտնապահարան (սեյֆ) տեղափոխվեցին և կնքվեցին կաթողիկոսական պանակեն, մատանին, խաչն ու երկգլխանի արծիվը, իսկ այնտեղ եղած գումարը տրվեց Մեզ՝ շինարարությունների և ընթացիկ ծախսերի համար:

Այսօր Մայր Աթոռն ունի հետևյալ գործուն կառույցները, որոնց վերապահված են ներքին և արտաքին մի շարք գործառնություններ և փոխհարաբերություններ: Այդ կառույցների թվին են պատկանում.

1. Վարչատնտեսական բաժին, որը, թերևս, ամենամեծն ու ծանրաբեռնվածն է Մայր Աթոռում՝ իր վրա դրված ընդգրկուն պարտականությունների պատճառով,
2. Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոն,
3. Գևորգյան Հոգևոր Ճեմարան,
4. Միջեկեղեցական հարաբերությունների բաժին
5. Հաշվապահություն,
6. Տպարան,
7. «Վանք» դուստր ձեռնարկություն,
8. Վերստուգիչ հանձնաժողով,
9. 1700-ամյակի գրասենյակ:

Անցնող այս չորս ամիսների ընթացքում ջանացինք առավել մոտիկից հետաքրքրվել և մանրամասնորեն տեղեկանալ այս կառույցների կացությանը, պաշտոնյաների գործունեությանը, միասնական ջանքերով հաղթահարել մի շարք դժվարություններ, որոնք առկա են տվյալ օղակների աշխատանքային առօրյայում:

ՄԻԱՐԱՆԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Մեր տեղապահության կարճ շրջանը նշանավորվեց ուրախառիթ մի քանի նախաձեռնություններով: Բավականին երկար ժամանակ էր, ինչ վարդապետական թեզերի պաշտպանություն չէր եղել Մայր Աթոռում: Սակայն սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներն այդ առումով արգասաբեր եղան:

Քահանայական ձեռնադրություններ և վարդապետական աստիճանի տվչություն

Նախ ասենք, որ սեպտեմբեր ամսին կատարվեցին քահանայական ձեռնադրություններ Օշականում և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում:

Դարձյալ սեպտեմբերին տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն և վեղարի տվչություն: Այսպիսով, մեր հոգևոր եղբայրների շարքերը համալրեցին ութ ամուսնացյալ և մեկ կուսակրոն քահանաներ:

Մեր արտոնությամբ և Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշմամբ, սեպտեմբերին Լիոնի Ս. Հակոբ եկեղեցում իր վարդապետական թեզը պաշտպանեց և մասնավոր վարդապետական իշխանություն ստացավ Ց. Ցաթև աբեղա Հակոբյանը:

Հոկտեմբերի 8-ին վարդապետական թեզերի պաշտպանություն տեղի ունեցավ նաև Մայր Աթոռում: Իսկ հոկտեմբերի 10-ին Մայր Տաճարում, Մեր ձեռամբ, տեղի ունեցավ մասնավոր վարդապետական աստիճանի տվչություն: Վարդա-

պետական ասուիճան շնորհվեց Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի երիտասարդ միաբաններ Ց. Մակար աբեղա Յովհաննիսյանին, Ց. Արտակ աբեղա Ցիգրանյանին, Ց. Գուրգեն աբեղա Աղաբաբյանին և Ց. Զարեհ աբեղա Կաբաղյանին:

Միաբաններից ոմանք պատրաստվում են մեկնել ուսանելու, ոմանք էլ՝ արտերկրի թեմերում ծառայության: Կան նաև արդեն մեկնածներ:

Պաշտոնական բնդունելություններ

Յուլիսի 4-ից մինչև հոկտեմբեր 26-ն ընկած ժամանակահատվածում ընդունեցինք մեծաթիվ հյուրերի, այդ թվում՝ օտարերկրյա դիվանագիտական այրերի, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված արտակարգ և լիազոր դեսպանների, ուխտավորների, գիտնականների, գործարարների, մի շարք այլ պատվիրակությունների:

Կազմակերպեցինք և անցկացրեցինք ներքին թեմերի հոգևորականների մեկօրյա հավաք-խորհրդակցություն:

Քույր եկեղեցիների պետերին, պաշտոնատար անձանց, ներքին թեմերի առաջնորդներին հղեցինք շնորհավորական ուղերձներ, մեր ցավակցությունները հայտնեցինք և հոգեպես սատար եղանք նաև նրանց, ովքեր մեր տեղապահության շրջանին հանգամանքների բերումով, քաղաքական իրավիճակի սրման հետևանքով՝ ծանր ապրումներ կրեցին թե՛ անձնապես և թե՛ հարազատ ժողովրդի համար:

Պաշտոնական այցելություններ

Տեղապահ ընտրվելուց հետո, հուլիսի 9-ին, ընկերակից ունենալով Ամենապատիվ Պատրիարք Հայրերին, եպիսկոպոսաց դասի հետ պաշտոնական այցելություն տվեցինք ՀՀ վսեմաշուք նախագահ Ռոբերտ Քոչարյանին, Ազգային ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանին, ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանին:

Շինարարների խնդրանքով եղանք Երևանում կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինհրապարակում:

Ցվեցինք այլ այցելություններ, մասնակցեցինք բազմաբնույթ միջոցառումների:

Եկեղեցիների վերադարձում, օծման արարողություններ

Ուրախությամբ պետք է տեղեկացնենք, որ այս չորս ամիսների ընթացքում եղանք մի քանի թեմերում:

Երկօրյա այցով մեկնեցինք Սյունյաց թեմ և կատարեցինք Դափանի Ծավ գյուղի Ս. Գևորգ եկեղեցու Սեղանի օծումը:

Ժ–ԺԱդակում օծեցինք Ս. Հարություն նորաբաց եկեղեցու գմբեթն ու զանգակատունը:

Մեր նախագահությամբ վերաբացվեց նաև Շիրակի թեմի Ազատան գյուղի Ս. Հարություն եկեղեցին:

Եղանք նաև ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդավայրում՝ Դսեղ գյուղում, կատարեցինք տեղի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերաօծումը:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ

1999-2000 թթ. տարեշրջանի տեսչական կազմը ներկայացնում են՝ տեսուչ Հոգեշ. Տ. Հայկազուն Ծ.Վրդ. Նաջարյանը, փոխտեսուչ Հոգեշ. Բաբկեն աբղ. Սալբիյանը, ուսմասվար պրն. Անդրանիկ Հակոբյանը, վերակացու Արթուր սրկ. Քարտաշյանը փոխարինեց Վազգեն սրկ. Քեսաբլյանին:

Վերակացուներ են նաև Արթուր սրկ. Պողոսյանը, Արտակ սրկ. Թումանյանը, պրն. Լևոն Սարգսյանը:

Տեսչական կազմը կարելին է անում, որպեսզի ճեմարանի կյանքը լինի կանոնավոր, սահուն և արդյունալից:

Ճեմարանի դասախոսական կազմը գրեթե նույնն է. հիմնականում ունենք 17 հոգևորական և 21 աշխարհական դասախոսներ: Այս տարի ճեմարանի դասախոսական կազմը ունեցավ մեծ կորուստ: Մեզ հետ չեն Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, պրն. Վաչագան Հովհաննիսյանը: Դասախոսական կազմը համալրել են Գերաշնորհ Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը (Հովվական Աստվածաբանություն), սարկավագներ Արթուր Պողոսյանը և Արտակ Թումանյանը:

Ուսումնական տարին սկսել ենք 111 ուսանողներով և 9 ազատ ունկնդիրներով: Որոշ ուսանողներ տարկետում են վերցրել:

Ուսումնական տարեշրջանը բացվեց սեպտեմբեր 14-ին: Առավոտյան Մայր Տաճարի առջև կատարվեց հոգեհանգիստ՝ ճեմարանի հիմնադիր Հայրապետների շիրիմների մոտ:

Ճեմարանի շենքում և ննջարաններում կատարվել են վերանորոգման աշխատանքներ: Բացի Սևանի Վազգենյան դպրանոցի ինն ուսանողներից, Հոգևոր ճեմարան ընդունվեցին նաև տարբեր թեմերից շուրջ 10 ուսանողներ:

Ուսումնական տարեշրջանի սկզբից ուսանողները հանդիպումներ են ունեցել Մեզ հետ, Գերմանիայի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Բեքչյանի, ինչպես նաև այլ անձանց հետ:

Դասախոսությունների շարքով հանդես է եկել պրոֆ. Գևորգ Խրլոպյանը՝ նվիրված «Տերունական Աղոթք»-ին: Ուսանողները հանդիպում ունեցան բարերար Ջուլիա Աշիկյանի հետ: Նախատեսվում է հանդիպում Վենետիկի Մխիթարյան միաբանության հայրերից Լևոն Զեքիյանի, ինչպես նաև հարգարժան պրն. Ռաֆֆի Հովհաննիսյանի հետ:

եղան մշակութային ձեռնարկներ, այցելություններ: Ինչպես ամեն տարի, այս տարի ևս ճեմարանի Ե և Զ լսարանների սաները մասնակցեցին Երևանի Ամերիկյան համալսարանում կազմակերպված երեկոյին: Այս տարի նույնպես մասնակցեցին ճեմարանի Ե և Դ լսարանի ուսանողները:

Թարգմանչաց տոնի առիթով ճեմարանի Ա, Բ և Գ լսարանների սաները եղան Օշականում և Աշտարակի եկեղեցիներում, շուրջ 50 ուսանողներ մասնակցեցին «Ուխտագնացություն Վարագա Սուրբ Խաչ» ազգագրական ներկայացում-հանդիսությանը, որը կազմակերպել էր 1700-ամյակի գրասենյակը, Երևանի Գ. Սունդուկյանի անվան Պետական Ակադեմիական թատրոնում:

Ճեմարանի ուսանողներն ամեն կիրակի մասնակցում են քաղաքի եկեղեցիներում մատուցվող Ս. Պատարագներին, օգնում կիրակնօրյա դպրոցներին:

«Քրիստոնեայ Հայաստան» թերթում հրատարակվում են ճեմարանական կյանքին վերաբերող նյութերը: Մեր ուսանողները տարբեր հոդվածներով հանդես են գալիս հանրապետական մամուլում:

Այս տարի ճեմարանի մշտական հովանավոր Կարո Գևորգյանի կողմից ստացանք բարերար Ջանոյանների ուղարկած 100 հատ շապիկներ: Մեր կողմից ևս ուսանողությանը տրվեցին սպորտային համազգեստներ, կոշիկներ և գրենական պիտույքներ: Հոգևոր ճեմարանին օգնում է նաև «Ագապե» բարեգործական կազմակերպությունը: Գրադարանի համար գնվեցին նոր գրքեր:

Շարունակվում է համակարգչային դասընթացը: Ճեմարանի ուսանողությունը ներկա եղավ վարդապետական 4 թեզերի պաշտպանության:

Ուսումնական տարվա ընթացքում կանոնավոր կերպով տեղի են ունենում մանկավարժական ժողովներ, որոնցից առաջինը կայացել է ուսումնական տարվա առաջին օրը:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղապահության շրջանում Մայր Աթոռի և քույր եկեղեցիների ու էկումենիկ կազմակերպությունների միջև հարաբերությունները եղել են բնականոն ու եղբայրական:

Գրեթե բոլոր եկեղեցիներն ու կազմակերպությունները ցավակցություն են հայտնել Մեզ՝ Վեհափառ Հայրապետի վախճանման առիթով, որոնցից շատերն իրենց ներկայացուցիչներին էին ուղարկել հուղարկավորությանը:

Մեր տեղապահության չորսամսյա շրջանում տեղի են ունեցել հետևյալ էկումենիկ ժողովներն ու հանդիպումները, որոնց Մայր Աթոռը բերել է իր լիարժեք մասնակցությունը.

ա) Հուլիսի 18-25-ը Ֆինլանդիայի Վալամոյի ուղղափառ վանքում տեղի ունեցավ Ուղղափառ երիտասարդական միջեկեղեցական կազմակերպության՝ ՍԻՆԴԵՍՄՈՍ-ի ԺԶ համագումարը, որին, հանուն Մայր Աթոռի, մասնակցեց Միքայել սրկ. Մելիքյանը:

բ) Օգոստոսի 26-ից սեպտեմբերի 3-ը ժնևում գումարվեց ԵՀԽ Կենտրոնական Կոմիտեի հերթական նիստը, որին մասնակցեցին Մայր Աթոռի ներկայացուցիչներ Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը և օր. Սիլվա Ղազելյանը: Որպես սպասարկու, նիստին մասնակցեց նաև օր. Լիլիթ Սարգսյանը: Սույն նիստի ընթացքում Տ. Աղան արքեպս. Պալիոզյանն ընտրվեց Ուղղափառ Եկեղեցիների մասնակցության վերաբերյալ Հատուկ հանձնախմբի, իսկ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը՝ «Հավատք և Կարգ» հանձնախմբի կազմում:

գ) Սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 1-ը Մայր Աթոռում գումարվեց ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղանի համագումարը, որն ընդունեց անցած երեք տարիներին կատարված աշխատանքների հաշվետվությունը և ծրագիր մշակեց գալիք երեք տարիների համար:

գ) Հոկտեմբերի 1-23-ը Վատիկանում գումարվեց Եվրոպայի Կաթոլիկ եպիսկոպոսների ժողովը, որին, որպես դիտորդ, մասնակցեց Տ. Նորվան եպս. Զաքարյանը:

դ) Հենց այս օրերին, հոկտեմբերի 24-29-ը, Վատիկանում տեղի է ունենում 2000-ամյակին նվիրված միջկրոնական մի համաժողով, որին մասնակցում է Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը:

ե) Նույն այս օրերին, հոկտեմբերի 24-31-ը, Գերմանիայի Հաննովեր քաղաքում տեղի է ունենում Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի կազմակերպած Եվրոպայի Քրիստոնեական Բնապահպանական Ցանցի տարեկան համագումարը, որին Մայր Աթոռը մասնակցում է առաջին անգամ՝ հանձին բնապահպանական հարցերի մասնագետ տիկ. Դիանա Հարությունյանի:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Նշված ժամանակահատվածում Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնը շարունակել է իրականացնել իր առջև դրված նպատակային ծրագրերը: Դրանք են.

ա) Քրիստոնեական կրոն դասավանդող ուսուցիչների պատրաստում

1998-99 ուստարվա վերջում քննություններ կազմակերպվեցին Գուգարաց թեմի՝ Վանաձորի, Կոտայքի թեմի՝ Հրազդանի և Աբովյանի, Սյունյաց թեմի՝ Եղեգնաձորի, Արագածոտնի թեմի՝ Աշտարակի և Թալինի լսարաններում: Թե՛ շրջանավարտ և թե՛ ուսանող ուսուցիչները ՔԴՔԿ-ի կողմից մշտապես ապահովվում են համապատասխան գրականությամբ, «Քրիստոնյա Հայաստան» թերթով և այլն:

Ամռան ընթացքում վերոհիշյալ լսարանների մասնակիցների համար կազմակերպվեցին ուխտագնացություններ:

Օգոստոսի 16-23-ը Արցախի թեմի Շուշի քաղաքում, առաջնորդ Սրբազան Հոր հովանավորությամբ, կազմակերպվեց ուսուցիչների վերապատրաստման 8-օրյա դասընթաց, որին մասնակցեցին անցած տարվա դասընթացներին չմասնակցած 56 ուսուցիչներ: Նույն ծրագրով հոկտեմբերի 1-4-ը նմանատիպ դասընթաց կազմակերպվեց Լաչինում՝ 25 ուսուցիչների համար: Արդյունքում՝ այսօր Արցախի և Լաչինի տարածաշրջանի դպրոցներում պետականորեն դասավանդվում է «Քրիստոնեական կրոն» առարկան:

բ) Քրիստոնեական դաստիարակության և կրթության հանձնակարգ

1998-99 ուստարում ավելացավ կիրակնօրյա դպրոցների թիվը տարբեր թեմերում: Զգալիորեն ավելացել են կրոնի դասավանդման ժամերը հանրակրթական դպրոցներում:

Ամավերջին կազմակերպվեցին հանդիսություններ, կիրակնօրյա դպրոցների շրջանավարտների քննություն, և արժանավորներին տրվեցին վկայականներ:

1999-2000 ուստարում վերսկսվել է կիրակնօրյա և հանրակրթական դպրոցների քրիստոնեական դաստիարակության գործունեությունը, և ամենուր նկատվում է աշակերտության աճ:

գ) Հրատարակչական գործունեություն

Սույն ժամանակահատվածում Կենտրոնի հրատարակչական բաժինը հրատարակել է հինգ անուն գիրք և «Հայ Առաքելական Ս. Եկեղեցու յոթ խորհուրդները» քարոզթերթիկները: Տպագրության են պատրաստվում ևս երկու անուն գրքեր:

Մեր կարգադրությամբ «Քրիստոնյա Հայաստան» թերթի տպաքանակն ավելացվեց 500 օրինակով:

Կվերահրատարակվեն մինչ օրս լույս ընծայված 25 անուն գրքերն ու գրքույկները և 20-ի հասնող քարոզթերթոնները:

Շուտով տպագրության կհանձնվի «Հին Կտակարանի ներածություն» գիրքը՝ ժամանակակից արևելահայերենով:

դ) Ձանգվածային քարոզչություն

Անցնող չորս ամիսների ընթացքում Կենտրոնը, ՀՀ Ազգային հեռուստատեսության հետ, շարունակել է «Խորան լուսոյ» և մանկական «Առաւօտ լուսոյ» հաղորդաշարերի հեռարձակումը, ինչպես նաև «Սիրեցէք զմիմեանս» ամենօրյա հոգևոր հաղորդումը՝ «Մշակույթ» հեռուստաընկերության ալիքով:

Կենտրոնի կողմից պատրաստվել և Ազգային հեռուստատեսության առաջին ծրագրով հեռարձակվել է Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի հիշատակին նվիրված «Մարդն Աստծո» ֆիլմը:

Պարբերաբար լույս է տեսել «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթը՝ 2000 տպաքանակով:

ՏՊԱՐԱՆ

Անցնող չորս ամիսների ընթացքում Մայր Աթոռի տպարանի գործունեությունը ևս բազմարդյուն էր: Հրատարակվեցին ինն անուն գրքեր և բրոշյուրներ, տարբեր բնույթի ծրագրեր, «Էջմիածին» պաշտոնական ամսագիրը, «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթը, մի շարք թերթոններ, այլ պարբերականներ, կրոնա-մեկնողական գրականություն, գունավոր սրբապատկերներ:

Տպագրության ընթացքում են ութ անուն գրքեր, այդ թվում «Էջմիածին» ամսագրի հերթական համարը, «Շարակնոց»-ը:

ՎԱՐՉԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Մեր զեկույցի այս հատվածն ընդգրկում է տեղապահական շրջանում կատարված շինարարական, տնտեսական և այլ ծախսերի հաշվետվությունը:

Մեր տրամադրության տակ գտնվող դրամական միջոցների մնացորդը, առ 1-ը հուլիսի, կազմել է 3.183.412 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Այդ միջոցներից երկու միլիոնը, մինչ տեղապահական ընտրությունը, արդեն դրված էր բանկում, 2000 թ. հունվար մարման ժամկետով: Տեղապահության ընթացքում ամեն ինչ արվել է՝ ապահովելու համար գործերի բնականոն ընթացքի անընդհատ ֆինանսավորումը և հնարավորին չափով հաստատելու խնայողության ռեժիմ՝ կատարվող ծախսերի նկատմամբ:

Հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում Մայր Աթոռի դրամական մուտքերը կազմել են 1.318.636 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, որից 759.117 դոլարը երջանկահիշատակ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի թողած կանխիկ գումարով ժառանգություններ էին և Նորին Սրբության կտակը: Մնացած մուտքերից անհրաժեշտ ենք համարում նշել Կյուլպենկյան Հաստատության 42.000 դոլար նվիրատվությունը, 50.000՝ ԱՄՆ Արևմտյան թեմից, 59.975՝ Փարիզի թեմից, ավստրիահայ բարերար Վոլոդյա Հարությունյանից՝ 75.000 դոլար:

Մնացած մուտքերն ապահովվել են վանքերից և եկեղեցիներից, գրանտից, բանկային տոկոսներից և այլն:

Մայր Աթոռի ծախսերը նույն ժամանակահատվածում կազմել են 1.784.603 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Մայր Աթոռի միաբանության և պաշտոնեության աշխատավարձերը վճարելու համար ծախսվել է 78.421 դոլար: Այս ընթացքում եղել է աշխատավարձի հավելում՝ 20 տոկոսի չափով:

Մայր Աթոռի ֆինանսական ծախսերի մեծ մասը կապված է տարբեր շինարարական և վերանորոգչական աշխատանքների հետ, որոնցից կարևորագույնը Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու շինարարությունն է: Ասենք,

որ երջանկահիշատակ Գարեգին Վեհափառն այդ նպատակով կտակել էր 650 հազար ԱՄՆ դոլար: Գերագույն Հոգևոր Խորհրդի երկու նիստերում մանրամասնորեն քննարկվեց շինարարության դանդաղ ընթացքը և, Մայր Աթոռի ճարտարապետական հանձնախմբի հետ խորհրդակցելուց հետո, ընտրվեց առաջարկված երեք ծրագրերից մեկը, այսինքն՝ եկեղեցու շինարարության ամբողջ երկաթբետոնե աշխատանքներն ավարտել մինչև 2000 թ. մայիսի 30-ը և Անիի տուֆով երեսպատման աշխատանքները կատարել ֆինանսական միջոցների սահմաններում:

Շարունակվել են նաև ուսանողական հանրակացարանի շինարարական աշխատանքները և մոտենում են ավարտին:

1700-ամյակի նախապատրաստական աշխատանքների շրջանակում ամռան ամիսներին շարունակվել են վերանորոգության աշխատանքները Կեչառիսի և Սևանի վանական համալիրներում, Հառիճավանքում, Հովհանավանքում, Ս. Հովհաննես եկեղեցում:

Շարունակվել են նաև Վայքի և Չարենցավանի նոր եկեղեցիների շինարարական աշխատանքները:

Նյութական օգնություն է տրվել Բաթումիի և Ախալցխայի եկեղեցիների նորոգման աշխատանքները կազմակերպելու համար:

Ավարտվել է Ազատանի եկեղեցու նորոգումը և կատարվել եկեղեցու վերաբացումը:

Ավարտվել է նաև Սպիտակի Ս. Հարություն եկեղեցու շինարարությունը, և այն պատրաստ է օծման: Կատարվել է շրջակայքի բարեկարգում:

Մայր Աթոռը կատարել է նաև պահանջվող հարկային բոլոր վճարումները:

Վարչական տարբեր նպատակներով այս ամիսների ընթացքում ծախսվել է 103.805 դոլար: Այս ծախսերն իրենց մեջ ներառում են նաև ֆիլհարմոնիկ նվագախմբին և կամերային երգչախմբին տրվող ամենամսյա օժանդակության գումարները, տարբեր ներկայացուցչական գործուղումների և այլ ծախսեր:

Երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի հուղարկավորության հետ կապված ծախսերը կազմել են 33.847 դոլարին համարժեք դրամ՝ ներառյալ ժամանած օտարերկրացի հյուրերի հյուրանոցային ծախսերը և հոգեճաշի արժեքը՝ վճարված «Մերիոթ-Արմենիա» հյուրանոցին:

Մայր Աթոռն ապահովում է նաև մի շարք կառույցների ֆինանսավորումը՝ ՔԴՔԿ, բանակի հոգևոր խորհրդականներ, եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանի համակարգող գրասենյակ և այլն: Այդ նպատակին հատկացվել է 49.751 դոլար:

Ընդհանուր առմամբ, անցած երեք ամիսների ընթացքում ծախսվել է 1.784.603 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Հոկտեմբեր ամսվա ընթացքում կատարված ծախսերը, ամփոփված չլինելու պատճառով, չեն ընդգրկված այս զեկույցում: Ամսվա մեջ կատարվել են անհ-

ռաժեշտ բոլոր վճարումները, ինչպես նաև շինարարական աշխատանքների շարունակականությունն ապահովող ֆինանսավորումները:

«ՎԱՆՔ» ԴՈՒՍՏՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Անցնող չորս ամիսների ընթացքում «Վանք» դուստր ձեռնարկության գործունեության ոլորտն ընդգրկել է.

Կնքված համապատասխան պայմանագիրը Ամերիկյան Կարմիր Խաչի (ԱԿԽ) հետ, որի նպատակն է աղետի գոտու շինարարական ծրագիրն ապահովել «Վանք» դուստր ձեռնարկության արտադրանքով (պատուհաններ և դռներ):

Համաձայն պայմանագրի, 155 հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամ էր նախատեսվել այդ նպատակով:

Նախատեսված աշխատանքների հիմնական մասը կատարվել է անցնող չորս ամիսների ընթացքում: Տրվել է 60 մլն դրամի արտադրանք՝ հուլիսից մինչև հոկտեմբերի 1-ը ներառյալ, որի արդյունքում ձեռնարկությունն ստացել է 2 մլն դրամ շահույթ: Այն կփոխանցվի Մայր Աթոռի ֆոնդ միայն տարեվերջին՝ բալանսը փակելուց հետո:

1700-ԱՄՅԱԿԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1700-ամյակի գրասենյակի գործունեության մասին տեղեկատվությունը ներկայացնում ենք ձեր ուշադրությանը՝ համառոտ ամփոփմամբ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանի ծավալուն տեղեկագրի:

Գրասենյակի գործունեության կարևորագույն ոլորտը դարձյալ մնում է եկեղեցաշինությունը, որն իրականացվում է Մայր Աթոռում ձևավորված ճարտարապետա-շինարարական հատուկ բաժնի միջոցով:

Անցնող ամիսների ընթացքում կազմակերպվեցին մի շարք հանդիպումներ, ժողովներ, խորհրդակցական հավաքներ: Աշխատանքային հանդիպումներ եղան նաև պետական հանձնաժողովի նախագահի հետ, եղան մեծաթիվ հեռուստատեսային ելույթներ:

Հարկ ենք համարում նշել նաև մի քանի կոնկրետ ձեռնարկներ:

1. Գանձասար-Էջմիածին ուխտագնացությունը, որ անցկացվեց հուլիս 27-ից օգոստոսի 16-ը:

2. «Հայաստան-2000» գիտաժողովը, որն անցկացվեց Գերմանիայում օգոստոսի 26-ից մինչև օգոստոսի 29-ը:

3. 1700-ամյակի հիմներգի հաստատում, որի մրցանակների շնորհումը կատարվեց մեր կողմից, Վեհարանում: Օրհներգի բառերի հեղինակը պոլսահայ բանաստեղծ Զահրատն է, իսկ երաժշտությանը՝ Ռուբեն Ալթունյանը:

4. Հրատարակչական գործունեություն: Հրատարակվել կամ արդեն հրատարակության պատրաստ են մի շարք գրքեր, ուղեգրքեր, բրոշյուրներ:

5. Եկեղեցիների և մատուռների օծում, հիմնարկեքներ: Այդ մասին զեկույցի համապատասխան բաժնում արդեն նշել ենք:

6. «Քառուղիներ» հաղորդաշար: Շուրջ մեկ տարի է ՀՀ Ազգային հեռուստատեսությամբ եթեր է հեռարձակվում այն՝ շաբաթը երկու անգամ:

7. Ուխտագնացություն Վարագա Ս. Խաչ: Ուխտագնացության ոգին վերածնելու նպատակով սեպտեմբերի 27-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում անցկացվեց «Ուխտագնացություն Վարագա Ս. Խաչ» գեղարվեստական հանդիսությունը:

Սեպտեմբերի 19-ին Արագածի գագաթ բարձրացավ քրիստոնեությունը Հայաստանի պետական կրոն հռչակման 1700-ամյակին և քրիստոնեության 2000-ամյակին նվիրված արշավախումբը: Այդ նպատակով սեպտեմբերի 18-ին Մայր Տաճարում տեղի ունեցավ հատուկ ժամերգություն, ապա օրհնվեցին եռագույնը, Արագածի գագաթին կանգնեցվելիք խաչը, կատարվեց Աստվածաշունչ Մատյանի ընծայումը՝ լեռան կատար տանելու համար:

«Հավատք և ժառանգություն» շարժման մասնակիցները շարունակում են եկեղեցիների բարեզարդման աշխատանքները:

Հոկտեմբերի 8-ից 9-ը Օշականում անցկացվեցին «Մաշտոցյան ընթերցումներ»: Սեպտեմբերի 15-16-ը կազմակերպվեցին այցելություններ Կոտայքի, Արագածոտնի և Սյունյաց թեմեր:

Հանրապետության վարչապետի հրավերով, սեպտեմբերի 17-ին, Կառավարական տանը հանդիպում տեղի ունեցավ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի պետական հանձնաժողովի անդամների հետ:

Շնորհակալություն ենք հայտնում Մայր Աթոռի միաբանությանը և պաշտոնեությանը, ինչպես նաև մեր բոլոր գործակիցներին, ովքեր օգնեցին Մեզ՝ Մեր պաշտոնեության չորս ամիսների ընթացքում: Մասնավոր շնորհակալություն ենք հայտնում նաև Հանրապետության նախագահին, վարչապետին, Ազգային Ժողովի նախագահին և պետական ավագանու բոլոր անդամներին՝ Ազգային-Եկեղեցական ժողովը կազմակերպելու գործում ցուցաբերած աջակցության և օգնության համար:

Մաղթում ենք, որ Սուրբ Հոգին առաջնորդի մեզ ապագա գործունեության ընթացքում, և այս Ազգային-Եկեղեցական սրբագումար ժողովը, ողորմությամբն Աստուծո և կամոքն ազգիս, վերցնի սգո քողը Սուրբ Գրիգոր Լուսավորչի գահից և օգնի ընտրել 132-րդ Հայրապետին՝ ի շինություն և ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո:

Հաջողություն ամենքիդ և շնորհակալություն ուշադրության համար: